Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
9-րդ դասարան

Տևողությունը՝ 180 րոպե

Գետակի վրա փոքրիկ ջրաղաց կար կողքին մի խրճիթ որտեղ ապրում էր ջրաղացպանն իր կնոջ ու մանկան հետ: Շուրջբոլորը պ-րում էին վարսաթա- ուռիները և գետակն անուշ կարկաչ-նով ասես մի չքնաղ հեքիաթ էր հյուսում:

Թա-շաթև թիթեռների խայ-անքով զմայլված մի օր մանուկը մոլորվելով հայտնվեց մեծ ճանապարհին և վախից սկսեց աղեխա-շ հե-կլտալ: Անցնող քարավանից մի մեծատուն գիրկն առնելով տղային տարավ իր տուն և քանի որ զավակ չուներ որդեգրեց:

Թեև մեծանում էր խանդակա- ու գորովալից միջավայրում սակայն ի զարմանս բոլորի տղան միշտ տխուր էր սրտմաշու- մի թախիծ տանջում էր նրան: Հենց նայում էր պատուհանից հոգին սլա-քով թռչում էր հեռու մի ուրիշ աշխարհ որ խա-կանքի նման մեկ երևում մեկ անէանում էր ու տա-ալուծվող մշուշում տա-որոշվում էր ծանոթ մի տնակ:

Երազի մեջ հայտնվելու պահից այդ տունը գտնելը դարձել էր նպատակ: Եվ տղան որոշեց անպայման կփնտրի ու կգտնի իր մղձավանջներում պատկերված տեսիլքը:

Հաջորդ օրը վաղ արևածագին նա հա-շտապ հավաքեց իրերն ու ճամփա ընկավ: Շրջեց աշխարհով մեկ ու մի առավոտ արեգակի երկինքը բոցավառող շողերի ներքո վերջապես գտավ հարազատ քողտի-ը: Տան ներսում բուխարու կողքին մի ալ-որ էր նստած տանջա-ուկ հայա-քը կրակին իսկ տարեց մի կին ար-ունքախառն ու տամու- աչքերով սեղան էր գցում: Նա ափսեի մեջ դրեց կերակուրն ու տխուր մրմնջաց

Սա էլ որդուս համար:

Զավակին կորցնելու օրվանից մայրը որդու բաժին հացը տալիս էր պանդուխտներին:

Նույն պահին դուռը բացվեց ու որդին կարոտով փարվեց ծնողներին:

1. Լրացրո՛ւ բառերում բաց թողնված տառերը: (2 միավոր)
2. Կետադրի՛ր համր բնագիրը: (3 միավոր)
3. Տրված բարդ նախադասությունները փոխակերպի՛ր պարզ նախադասության.

Թեև մեծանում էր խանդակա- ու գորովալից միջավայրում սակայն տղան ի զարմանս բոլորի միշտ տխուր էր:

Հենց նայում էր պատուհանից հոգին սլա-քով թռչում էր հեռու մի ուրիշ աշխարհ որ խա-կանքի նման մեկ երևում մեկ անէանում էր :

Եվ տղան որոշեց անպայման կփնտրի ու կգտնի իր մղձավանջներում պատկերված տեսիլքը: (3 միավոր)

4. Տեքստից դո'ւրս գրիր անորոշ դերբայի տարաբնույթ կիրառություններով գործածված չորս օրինակ՝ նշելով շարահյուսական պաշտոնները: (2 միավոր)
5. Գրի՛ր տրված բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ. *մույթ, դիպակ, պարարտ, վեհերոտ, եղրևանի, նկրտում, լաջվարդ, բավիղ, ծնծղա, իմաստակ:* (2 միավոր)
6. Տրված համառոտ նախադասությունը դարձրո՛ւ ընդարձակ՝ հինգ տարաբնույթ անդամների հավելումով. Երազանքն իրականացավ: (2 միավոր)
7. Բացատրի՛ր *Գողգոթայի ճանապարհ* թևավոր խոսքը: Տո՛ւր ծագման մեկնաբանությունը: (1 միավոր)
8. Գրի՛ր շարադրություն՝ «Միայնակ ծառի մտորումները» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)